ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

---

«24» դեկտեմբերի 2018թ. № 2/6583-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## Է.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 56/2018 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները խախտելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության թիվ 3 բաժնի մաքսային տեսուչ Էդգար Ղազարյանին հայտարարել դիտողություն:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին – սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 12/22/2018 12:37:43 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

Դ.ԱՆԱՆՅԱՆ